# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
*հեռ. 077101869 , e-mail: burastan.ararat@mta.gov.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2017 թվականի N 31 - Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 9 նիստի օրակարգը՝

1. Համայնքի 2017թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

/Զեկ.՝ Ա. Թարվերդյան/

2. Բուրաստան համայնքի ավագանու 16.12.2016թ. << Համայնքապետարանի օբյեկտներում կատարված գույքագրման արդյունքների մասին>> N 38- Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/Զեկ.՝ Ա. Թարվերդյան/

3.Բուրաստան համայնքի ավագանու 2017թվականի փետրվարի 3-ի թիվ 5-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/Զեկ.՝ Ա. Թարվերդյան/

4. Բուրաստան համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի նոր կազմը հաստատելու եվ Բուրաստան համայնքի ավագանու 28 նոյեմբերի 2014թվականի N 25 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

/Զեկ.՝ Ա. Թարվերդյան

5. Համայնքի 2017թ. բյուջեի իննամսյա պլանի կատարողականի մասին

/Զեկ.՝ Ա. Թարվերդյան/

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻԴԱ
6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆՆԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
*հեռ. 077101869 , e-mail: burastan.ararat@mta.gov.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2017 թվականի N 32- Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Համայնքի 2017թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

Վարչական բյուջեի ծախսային մաս .

1. Փողոցների պահպանում և շահագործում/04.05.01.59/ հատվածի 4269/հատուկ նպատակային նյութեր/հոդվածը նվազեցնել 920.0 հազ. դրամով :
2. Համայնքների պահուստային ֆոնդ /11.01.02.51/ հատվածի 4891/ պահուստային միջոցներ հոդվածը նվազեցնել 3750.0 հազ. դրամով :
3. Փողոցների պահպանում և շահագործում/04.05.01.59/ հատվածի 4251/շենքերի և շինությունների ընթացիկ վերանորոգում և պահպանում /հոդվածը ավելացնել 4420.0 հազ. դրամով:
4. Կառավարման մարմնի պահպանում /01.01.01.51/ հատվածի 4234/տեղեկատվական ծառայություններ/ հոդվածը ավելացնել 100.0 հազ. դրամով:
5. Գույքի նկատմամբ իրավունքի գրանցում հատվածի /01.06.01/60/ հատվածի 4241/ մասնագիտական ծառայություններ/ հոդվածը ավելացնել 150.0 հազ. դրամով:

Ֆոնդային բյուջեի ծախսային մաս .

1. Նախադպրոցական ուսուցում/09.01.01.51/ հատվածի 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հատվածը նվազեցնել 826.977 հազ. դրամով:
2. Փողոցների պահպանում և շահագործում/04.05.01.59/ հատվածի 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում /հոդվածը ավելացնել 50.0 հազ. դրամով:

3. Փողոցների պահպանում և շահագործում/04.05.01.59/ հատվածի 5134 /նախագծահետազոտական ծախս /հոդվածն ավելացնել 100.0 հազ. դրամով:

4.Հանգիստ մշակույթ ,կրոնի /այլ դասերին/ պատկանող /08.05.01.55/ հատվածի 5112 /շենքների և շինությունների շինարարություն/ հոդվածն ավելացնել 676.977 հազ. դրամով:

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ կողմ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ կողմ

3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ կողմ

5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻԴԱ կողմ

6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆՆԱ կողմ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869 , e-mail: burastan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2017 թվականի N 33- Ա

### ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.12.2016թ. << ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՕԲՅԵԿՏՆԵ-ՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> N 38- Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70 –րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով`

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Բուրաստան համայնքի ավագանու 16.12.2016թ << Համայնքապետարանի օբյեկտներում կատարված գույքագրման արդյունքների մասին>> N 38- Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները .

Որոշման հավելվածում << Հիմնական միջոցներ>> բաժնում`

1. Տեքստի 9-րդ կետը հանել
2. <<17. Ճոճանակ (2016թ.) երկու հատ -400.0հազ.դրամ >> բառերից հետո կարդալ `<<18. Ծառայողական ավտոմեքենա Nissan X trail - 3369.150 հազ.դրամ>>
3. << Ընդամենը>> բառից հետո <<106580285 >> թվի փոխարեն կարդալ `<<107949435 >> թիվը:

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ Կողմ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ Կողմ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻԴԱ Կողմ
6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆՆԱ Կողմ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869 , e-mail: burastan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2017 թվականի N 34- Ա

## ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի ԹԻՎ 5-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրեքի 70-րդ հոդվածի պահանջներով.հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 29.07.2017թվականի թիվ 24.12.(416449)-17 հանձնարարականը,Արարատի մարզպետի թիվ 1/6/3/5079-17գրությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Բուրաստան համայնքի ավագանու 2017թվականի փետրվարի 3-ի «Բուրաստան համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին»թիվ 5-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն.

<<Տեղական վճարներ >> բաժնում 5-րդ կետի 3) ենթակետից հետո ավելացնել.

4) Համայնքի առևտրի ,հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների օբյեկտների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսեկան 20 դրամ:

5) Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների 1քմ-ի համար ամսեկան 4դրամ:

6) Կրթական,մշակութային առողջապահական սպորտային շինությունների 1քմ-ի համար ամսեկան 2դրամ»:

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ կողմ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ կողմ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻԴԱ կողմ
6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆՆԱ կողմ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
*հեռ. 077101869 , e-mail: burastan.ararat@mta.gov.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2017 թվականի N - 35-Ա

## ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014ԹՎԱԿԱՆԻ N 25 –Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1- ին կետի պահանջներով .

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Բուրաստան համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի եվ տարեկան բյուջեի կառավարման / կազմման , հանրային քննարկման, իրականացման (կատարման ) և վերահսկման / խորհրդի նոր կազմը .

1. Մկրտչյան Ալբերտ - համայնքի բնակիչ, խորհրդի նախագահ (համաձայնությամբ)
2. Աղաջանյան Վաչիկ - համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահի տեղակալ
3. Ղազարյան Էվելինա - աշխատակազմի քարտուղար, խորհրդի քարտուղար
4. Գեղամյան Մարիամ -համայնքապետարանի գլխավոր մասնագետ, խորհրդի ադամ
5. Ղազարյան Սերգո - ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
6. Հովհաննիսյան Ալբերտ - ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ
7. Աբրահամյան Կարապետ - ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
8. Հարությունյան Սմբաթ - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
9. Ալավերդյան Հովհաննես -համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)

2. Խորհրդի գործունեությունն իրականացնել համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 28-ի Բուրաստան համայնքի ղեկավարին կից, Բուրաստան համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին N 23-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. Ուժը կորցրած համարել Բուրաստան համայնքի ավագանու <<Բուրաստան համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին>> 28.11.2014թ. թիվ 25-Ն որոշումը :

Կողմ – 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻԴԱ
6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆՆԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869 , e-mail: burastan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2017 թվականի N 36-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆԱՄՍՅԱ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջներով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Բուրաստան համայնքի ղեկավար Ա. Թարվերդյանի հաղորդումըհամայնքի բյուջեի 2017թ. իննամսյա պլանի կատարման արդյունքների մասին ընդունել ի գիտություն:

*Եկամուտների մասով՝*

| Հ/Հ | Եկամուտների անվանումը | բյուջե կխ.հազ. դրամ// | Կատարող-ական /հազ. դրամ | Կատարման %-ը |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 2200.0 | 2677.5 | 121 |
| 2 | Գույքահարկ | 2831.6 | 3208.0 | 113 |
| | Շին գույքահարկ | 137.0 | 165.6 | 120.4 |
| 3 | Տեղական տուրքեր՝ | 210.0 | 274.6 | 130.7 |
| | Ոգելից խմիչքի և (կամ)ծխախոտի արտադրանքի վաճառք | 120.0 | 160.4 | 133.7 |
| | Նոր կառուցվող օբյեկտների շինարարության թույլտվություն | --- | 7.5 | |
| | Արտաքին գովազդի թույլտվություն | 90.0 | 106.7 | 118 |
| 4 | Համայնքային սեփ. համարվող հողերի վարձ.վարձավճարներ | 600.0 | 869.0 | 144.8 |
| 5 | Ձեռնարկություններից և կազմակերպություններից գույքահարկ | 62.8 | 64.5 | 102 |
| 6 | Տեղական վճարներ՝ | 118.0 | 129.5 | 109 |
| | Շինարարության ավարտի փաստագրում | ---- | 5.0 | |
| | Աղբահանության վճար | 108.0 | 112.5 | 104 |
| | Աճուրդի մասնակցության վճար | ---- | 2.0 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Վարչական իրավախախտումներ | *10.0* | 10.0 | 100.0 |
| *7* | *Դոտացիա պետբյուջեից* | 25774.5 | 25774.5 | 100 |
| *8* | Տարեսկզբի ազատ մնացորդ | 11326.977 | 11326.977 | 100 |
| | *Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը   Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ն Ե Ր* | 43260.877 | 44490.177 | *102.8* |

Ծախսային մասով՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 14500.0 | 11963.0 | 82.5 |
| 2 | Էներգետիկ ծառայություն | 600.0 | 535.5 | 89.25 |
| 3 | Կապի ծառ. | 180.0 | 152.0 | 84.4 |
| 4 | Ծառայողական Մեքենայի ապահովագրություն | 35.0 | *31.0* | *88.5* |
| 5 | Համակարգչային ծառայություն | 150.0 | 50.0 | 33.3 |
| 6 | Տեղեկատվական ծառայություն | 250.0 | 180.0 | 72 |
| 7 | Մեքենաների ընթացիկ նորոգում | 300.0 | 154.0 | 51.3 |
| 8 | Գրասենյակային նյութեր | 250.0 | 197.0 | 78.8 |
| 9 | Դիզելային վառելիք | 600.0 | 400.0 | 66.67 |
| 10 | Տնտեսական ապրանք | 200.0 | 156.0 | 78 |
| 11 | Այլ նպատակային նյութեր | 150.0 | 60.0 | 40 |
| 12 | Ծառայողական Մեքենայի տեխզննում | 50.0 | 9.3 | 18 |
| 13 | Ծառայողական ավտոմեքենայի գնման | 3897.0 | 3738.0 | 95.9 |
| 14 | Վարչական սարքավորումներ | 800.0 | 722.0 | 90.25 |
| 15 | Մարզահրապարակի շին. նախագծահետազոտական ծախս | 50.0 | 30.0 | 60.0 |
| 16 | Նվեր շրջանավարտներին | 300.0 | 218.8 | 72.9 |
| 17 | Հակակարկտային ծառ | 100.0 | 100.0 | 100 |
| 18 | Աջակցություն հասարակական կազմակերպություններին | 400.0 | 245.0 | 61.25 |
| 19 | Մշակութային միջ. կազմակերպում | 800.0 | 215.0 | 26.8 |
| 20 | Նվերներ մշ. միջոցառումներին | 1450.0 | 1327.9 | 91.5 |
| 21 | Էլ Մանասյան փողոցի արտաքին լուսավորվածության ցանցի նորոգում | 967.5 | 967.5 | 100 |
| 22 | Էլ Մանասյան փողոցի արտաքին լուսավորվածության ցանցի նախագծ. հետազոտական ծախս | 35.0 | 35.0 | 100 |
| 23 | Արտաքին լուս. ցանցի էներգետիկ ծառ | 350.0 | 281.0 | 80.2 |
| 24 | Թատերական ներկայացումներ | 70.0 | 48.0 | 68.6 |
| 25 | Կադաստրային և նոտարական վճար | 300.0 | 11.0 | 3 |
| 26 | Հողի հարկի և գույքահարկի ավտոմատացված հաշվարկ | 300.0 | 200.0 | 66.7 |
| 27 | Հատուկ նպ. Այլ նյութեր | 100.0 | 36.0 | 36 |
| 28 | Մասնագիտական ծառ/չափագրման/ | 600.0 | 400.0 | 66.67 |
| 29 | Կանաչ տարածքի վարչական սարքավորումներ | 800.0 | 660.0 | 82.5 |
| 30 | Դասագրքերի գումար | 250.0 | 250.0 | 100 |
| 31 | Ծաղկեպսակի գումար | 100.0 | 40.0 | 40 |
| 32 | Հուղարկավորության նպաստ | 600.0 | 540.0 | 90 |
| 33 | Սոց օգնություն | 2400.0 | 2345.0 | 97.8 |
| 34 | Աղբահանություն և սանիտարական մաքրման ծառ | 810.0 | 720.0 | 90 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 35 | Բնապահպանական վճար | 50.0 | 32.7 | 65.4 |
| 36 | Բանկային ծառ | 10.0 | 10.0 | 100 |
| 37 | Համակարգչային ծառ | 20.0 | 15.0 | 75 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 32824.5 | 27075.7 | 82.3 |

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ կողմ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ կողմ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻԴԱ կողմ
6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆՆԱ կողմ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ՔՈՒՌԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ · 04200443 ·